Հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման սկզբունքները, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____2022 թվականի N _____-Ն

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները՝ *Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.*

1. Սահմանել հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման սկզբունքները, առաջնահերթությունները, փոխհատուցման կարգը և չափը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-199-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ն. Փաշինյան**

2022 թ. .....

Երևան

ՀՀ կառավարու

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ ՏՈՒԺՈՂՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ

1. Հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցումն իրականացվում է թափանցիկության, անաչառության և մարդասիրության սկզբունքներով:
2. Յուրաքանչյուր անգամ պետության կողմից հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման առաջանահերթությունները որոշվում են՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում հանցագործությունների վիճակագրությունը, որոշակի խումբ հանցագործությունների տարածվածությունը, տուժողների գույքային դրությունը, հանցագործությունների և դրանցով պատճառված վնասի բնույթը:
3. Քրեական վարույթով հատուցման ենթակա են տուժողին պատճառված վնասի ներքոնշյալ տեսակները՝ նշված հերթականությամբ՝

- բժշկական սպասարկման համար ծախսված գումարը,
- անաշխատունակության հետևանքով կրած դրամական վնասը,
- հուղարկավորության համար ծախսված գումարը,
- կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված դրամական վնասը,
- հափշտակված գումարը:

4. Սույն կարգի 3-րդ կետով նախատեսված վնասի յուրաքանչյուր հաջորդ տեսակը ենթակա է հատուցման միայն նախորդ տեսակի վնասը հատուցելուց հետո:
5. Հանցագործությունից տուժած անձինք հանցագործությամբ իրենց պատճառված վնասի համար կարող են դիմել լիազոր մարմնին՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

- անձը հաստատող փաստաթղթի պատճենը.
- քրեական վարույթով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատավարական ակտը.
- տվյալ քրեական վարույթով իրեն որպես տուժող ճանաչելու մասին

որոշումը.

- դրամական վնասի դեպքում՝ դրանց առկայությունը և չափը հաստատող փաստաթղթերը.
- կերակրողին կորցնելու հետևանքով պատճառված դրամական վնասի դեպքում՝ նշված փաստը հաստատող տվյալները.
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կատարողական վարույթի շրջանակներում պատճառված վնասը փոխհատուցելու անհնարինությունը հավաստող տվյալները.
- լիազոր մարմնին ուղղված դիմում:

6. Հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում ստանալու դիմում կարող է ներկայացվել, եթե պատճառված վնասը հնարավոր չի եղել փոխհատուցել Հարկադիր կատարման ծառայության կատարողական վարույթի շրջանակներում:
7. Հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցում չի իրականացվում, եթե տուժողի կողմից կատարվել են հանցագործությանը նպաստող կամ քննությանը խոչընդոտող ապօրինի արարքներ:
8. Լիազոր մարմնի կողմից իրականացվում է ներկայացված դիմումի և դրան կից փաստաթղթերի ուսումնասիրություն, որի հիման վրա որոշում է կայացվում ներկայացված հայտին հավանություն տալու կամ այն մերժելու մասին: Հայտին հավանություն տալու դեպքում լիազոր մարմինը սկսում է տուժողին պատճառված վնասի փոխհատուցման գործընթաց:
9. Փոխհատուցում կարող է տրամադրվել, եթե պատճառված վնասի չափը գերազանցում է Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկը:
10. Փոխհատուցում կարող է տրամադրվել պատճառված վնասի (մեկից ավելի տեսակի վնաս պատճառված լինելու դեպքում՝ դրանց հանրագումարի) մինչև նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը չգերազանցող գումարի չափով:
11. Սույն հավելվածով նախատեսված լիազոր մարմինը ճանաչվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ յուրաքանչյուր անգամ պետության կողմից հանցագործությամբ տուժողներին պատճառված վնասի փոխհատուցման մասին որոշում կայացնելու դեպքում: